ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆիրդուսի/33-րդ թաղամասի կառուցապատման նախագծին նվիրված լուսաբանման վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

2020թ. հունիս-հուլիս ամիսներին հայաստանյան ԶԼՄ-ներում մի շարք հրապարակումներ եղան Երևանի 33-րդ թաղամասի, որն առավել հայտնի է Ֆիրդուսի անունով, կառուցապատման մասին:

Այս թեմային ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի անդրադարձի համար առիթ են հանդիսացել «Երևանի ժառանգության պահպանության կոմիտե» հանրային նախաձեռնության անդամ Իզաբելլա Սարգսյանի բողոքներն ընդդեմ Հանրային հեռուսատատեսության «Լուրեր» և Շանթ հեռուսատաընկերության «Հորիզոն» լրատվականի՝ համապատասխանաբար 2020թ. հունիսի 21 և 27-ի ռեպորտաժները:

Բողոքների հեղինակը կարծում է, որ ռեպորտաժներում թեմայի լուսաբանումը խիստ միակողմանի է, քանի որ առկա է իրավիճակին միայն կառավարության և կառուցապատողների հայացքներին և շահերին համընկնող տեսակետ, բայց չեն արտացոլվում խնդրի մյուս կողմը/կողմերը: «Նյութը տեղավորվում է տեղեկատվական քարոզչության տրամաբանության մեջ՝ հաշվի առնելով վերջին շրջանում հանրային ուշադրությունն ու որոշակի մոբիլիզացիան»,- եզրակացնում է Իզաբելլա Սարգսյանը:

Ռեպորտաժներում անդրադարձ է եղել թաղամասի վերակառուցման ՀՀ կառավարության հաստատած նախագծին, կառուցապատման ընթացքին, ներկայացվել են պաշտոնական և կառուցապատողի տեսակետները, ինչպես նաև այն բնակիչների խոսքը, որոնք որպես փոխհատուցում իրենց քանդվող/իրացվող բնակարանների ստացել են նորերը և իրենց գոհունակությունն են

արտահայտել այդ կապակցությամբ։

Դիտորդ մարմինը համարում է, որ մայրաքաղաքի պատմական թաղամասերի հետ կապված լուսաբանումը պետք է հաշվի առնի այդ խնդրի նկատմամբ քաղաքացիների շրջանում առկա վերաբերմունքը հանրային գերակա շահի սկզբունքի իրացման՝ դեռևս 2000-ական թվականներից հայտնի պրակտիկային։ Երևանի կենտրոնի բնակիչների որոշակի մասը չնչին փոխհատուցումներով, երբեմն առանց դրանց, հաճախ բռնի ուժի կիրառմամբ վտարվեցին իրենց կացարաններից, իսկ տարածքները կառուցապատվեցին՝ առանց ձևավորված պատմա-մշակութային մթնոլորտի և ուրույն դիմագծի պահպանման։ Այդ միջադեպերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դեմ աննախադեպ քանակով վճիռներ կայացվեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից։

Ոչ հեռու պատմության կրկնությունը բացառելու գործում մեծ է լրատվամիջոցների, մասնավորապես՝ թեմային նրանց բազմակողմանի, տարբեր մոտեցումների արտացոլմամբ անդրադարձների դերը։ Այդ առումով Դիտորդ մարմինն արձանագրում է, որ բողոքի առարկա ռեպորտաժներում, ներկայացնելով Երևանի 33-րդ թաղամասի ճակատագրի նկատմամբ իշխանությունների, կառուցապատողների և առանձին բնակիչների վերաբերմունքը, «Լուրերի» և «Հորիզոնի» նշված ռեպորտաժների հեղինակները չեն անդրադարձել քաղաքացիական նախաձեռնությունների ներկայացուցիչների մոտեցումներին։

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- հավատարիմ մնալով բազմակարծության, փաստերի համադրման և մեկնաբանության, ինչպես նաև հասարակական հետաքրքրություն ունեցող իրադարձությունների վերաբերյալ տարբեր տեսակետներ ներկայացնելու ազատության սկզբունքներին,

- պաշտպանելով դիրքորոշումների ազատ արտահայտման իրավունքը,

- համոզված լինելով, որ վիճահարույց թեմաներին անդրադառնալիս լրատվամիջոցները պետք է առավել հետևողականությամբ ապահովեն հնարավոր բոլոր կողմերի ներգրավվածությունը լրագրողական նյութերում, նրանց մեկնաբանությունները և այլ մասնագիտական նորմերի պահպանումը,

- հաշվի առնելով, որ քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցիչները, քաղաքաշինության մասնագետները

Երևանի 33-րդ թաղամասի կառուցապատման վերաբերյալ բավականին ակտիվ քննարկում էին ծավալել սոցիալական ցանցերում, ինչի մասին հեռուստաընկերությունների խմբագրությունները չէին կարող տեղյակ չլինել,

- գիտակցելով որ ոչ բոլոր շահագրգիր կողմերի մոտեցումները կարող էին տեղ գտնել առանձին վերցրած մեկ նյութում,

- միևնույն ժամանակ համարելով, որ թեմայի կարևորությունը և զարգացումը ենթադրում են դրան պարբերաբար անդրադարձ և այդպիսի լուսաբանման շնորհիվ՝ բոլոր կողմերի կարծիքների ներառում,

հայտարարում է.

1. վերոնշյալ ռեպորտաժներում չի ապահովվել կարծիքների լիարժեք փոխանակում,

2. այդ ռեպորտաժներից առաջ կամ հետո ընկած ողջամիտ ժամանակահատվածում չի եղել թեմային այլ անդրադարձ, որը հնարավորություն կստեղծեր լսարանին ներկայացնել չարտացոլված տեսակետները,

3. հատկապես Հանրային հեռուստաընկերությունից պետք էր ակնկալել խնդրի շուրջ ձևավորված քաղաքացիական շարժման, կառուցապատման նախագծի վերաբերյալ փորձագետների այլընտրանքային գնահատականների մասին հանրության իրազեկում։

Ելնելով վերոգրյալից՝ Դիտորդ մարմինը ԶԼՄ-ներին հորդորում է՝

- պարբերաբար անդրադառնալ Երևանի 33-րդ թաղամասի թեմայի զարգացմանը, ներկայացնելով կառուցապատման նախագծի վերաբերյալ առկա մոտեցումների ամբողջական բազմազանությունը,

- առանձին վերցրած մեկ ռեպորտաժում բոլոր տեսակետները ներկայացնելու անհնարինության դեպքում դա անել ողջամիտ ժամկետում տարբեր օրերի՝ նոր ռեպորտաժում այդ մասին տեղյակ պահելով լսարանին,

- ցավալի հիշողություններ և զուգահեռներ արթնացնող հրապարակումներ կատարելիս դրսևորել առավել նրբանկատություն՝ խստագույնս հետևելով մասնագիտական էթիկայի կանոններին։

ԴՄ-ն ընդգծում է, որ մասնավոր հեռուստաընկերությունները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների պատշաճ և

համակողմանի լուսաբանում ապահովել պարտավորվում են իրենց տրված լիցենզիաների պայմաններով, իսկ Հանրային հեռուսատատեսությունը՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Սահմանադրությամբ:

Ընդունվել է 2020թ. հուլիս 16-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 47-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007թ. մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015թ. մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: